ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթերթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ե՞րբ է գահ բարձրացել Աքեմենյան Դարեհ 1–ին արքան.

1) Ք.ա. 550թ.
2) Ք.ա. 525թ.
3) Ք.ա. 522թ.
4) Ք.ա. 520թ.

2 Ե՞րբ են կազմվել Դրակոնի գրավոր օրենքները.

1) Ք.ա. 621թ.
2) Ք.ա. 560թ.
3) Ք.ա. 600թ.
4) Ք.ա. 594թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել Պուատիեի ճակատամարտը ֆրանկների և արաբների միջև.

1) 711թ.
2) 732թ.
3) 756թ.
4) 742թ.

4 Ե՞րբ են թուրքական զորքերը գրավել Բրուսա քաղաքը.

1) 1299թ.
2) 1389թ.
3) 1355թ.
4) 1302թ

5 Ե՞րբ է մահացել Օլիվեր Կրոմվելը.

1) 1652թ.
2) 1660թ.
3) 1658թ.
4) 1654թ.

6 Ե՞րբ է Ռուսաստանը Պետրոս 1–ի կողմից բաժանվել 8 նահանգների.

1) 1708թ.
2) 1701թ.
3) 1711թ.
4) 1721թ.

7 Ե՞րբ է Թուրքիային հանձնվել Սիրիայի տարածքի անբաժանելի մասը կազմող Ալեքսանդրետի սանջակը.

1) 1940թ.
2) 1938թ.
3) 1942թ.
4) 1939թ.



80 Կատարել համապատասխանեցում.

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Իրանի Իսլամական հանրապետության հռչակումը | 1. | 1923թ. | 1. | Բորիս Ելցին |
| 2. | Գերմանական նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության ստեղծումը | 2. | 1920 թ. | 2. | Մուստաֆա Քեմալ |
| 3. | Ժողովրդական կուսակցության հիմնումը Թուրքիայում | 3. | 1919 թ. | 3. | Ադոլֆ Հիտլեր |
| 4. | Ռուսաստանի նախագահի ընտրությունները | 4. | 1979 թ. | 4. | Բենիտո Մուսոլինի |
| | | 5. | 1991 թ. | 5. | Այաթոլլահ Խոմեյնի |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 5 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 3 | 2 |
| 4 | 5 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 2 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 5 | 4 |
| 4 | 2 | 3 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 5 |
| 2 | 3 | 3 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 5 | 1 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 1 | 5 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 5 | 2 |

**78** Որտե՞ղ է Ադոլֆ Հիտլերը հանդես եկել հետևյալ հայտարարությամբ. «Ես այժմ Արևելք եմ ուղարկում իմ «մահվան ջոկատները»,որոնց հրամայված է առանց խղճահարության սպանել լեհ ցեղին պատկանող և լեհերեն խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին…»:

1) Բեռլինում
2) Վիեննայում
3) Քյոնիքսբերգում
4) Օբերզալցբուրգում

**79** Կատարել համապատասխանեցում.

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մոսկվայի հանձնումը ֆրանսիացիներին | 1. | 1606թ. | 1. | Թոմաս Ջեֆերսոն |
| 2. | Ֆրանս-պրուսական պատերազմի սկիզբը | 2. | 1812 թ. | 2. | Չարլզ 2-րդ |
| 3. | Ստյուարտների արքայատոհմի վերականգնումը | 3. | 1870 թ. | 3. | Միխայիլ Կուտուզով |
| 4. | ԱՄՆ-ի «Անկախության հռչակագիրը» | 4. | 1660 թ. | 4. | Չարլզ 1-ին |
| | | 5. | 1776 թ. | 5. | Նապոլեոն 3-րդ |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 3 | 5 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 5 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 3 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 4 | 4 |
| 4 | 3 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 4 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 3 | 2 |



**8** Ո՞ր ծովամարտում պարսկական նավատորմը ջախջախվեց հույների կողմից.

1) Կիպրոսի
2) Սալամինի
3) Ակցիումի հրվանդանի մոտ
4) Սինոպի

**9** Ո՞րն էր Ալեքսանդր Մակեդոնացու տերության մայրաքաղաքը.

1) Կորնթոսը
2) Աթենքը
3) Ալեքսանդրիան
4) Բաբելոնը

**10** Ո՞վ էր Ֆրանկական  թագավորության հիմնադիրը.

1) Օդոակրը
2) Քլոդվիգը
3) Կառլոս Մարտելը
4) Ալարիքը

**11** Ո՞վ էր գլխավորում Տաճարականների հոգևոր ասպետական միաբանությունը.

1) Երուսաղեմի թագավորը
2) Մեծ մագիստրոսը
3) Անտիոքի դուքսը
4) Երուսաղեմի լատինական պատրիարքը

**12** Ինչպե՞ս կոչվեց ԱՄՆ-ի հարավում ստեղծված պետությունը.

1) լիգա
2) ֆեդերացիա
3) կոնֆեդերացիա
4) միություն

**13** Ի՞նչ անունով է հայտնի Մարիա Անտուանետա թագուհին պատմության մեջ.

1) «տիկին պակասորդ »
2) «տիկին բարեպաշտ»
3) «տիկին բարեփոխիչ»
4) «տիկին զվարճասեր»

**14** Ո՞վ գլխավորեց Անգլիայում 1940թ. մայիսի 10–ին կազմված կոալիցիոն կառավարությունը.

1) Դ. Լլոյդ Ջորջը
2) ՈՒ. Չերչիլը
3) Ն. Չեմբեռլենը
4) Կ. Էտլին

15 Ո՞րն է «կոմեդիա» բառի հայերեն համարժեքը.

1) «ողբերգություն»
2) «պարահանդես»
3) «կատակերգություն»
4) «շքահանդես»

16 Ի՞նչ է նշանակում Ռենեսանս.

1) Վերակառուցում
2) Վերածնունդ
3) Վերանորոգում
4) Վերամիավորում

17 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի հիմնադրումը
բ. Կորնթոսի համահունական համաժողովը
գ. Թեբեի ապստամբությունը մակեդոնական տիրապետության դեմ
դ. Քերոնեայի ճակատամարտը հունական և մակեդոնական բանակների միջև
ե. Պերսեպոլիսի հրդեհումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից

1) ա,դ,գ,ե,բ
2) ա,գ,դ,ե,բ
3) բ,դ,գ,ա,ե
4) դ,բ,գ,ա,ե

18 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Խաչակրաց 3–րդ արշավանքը
բ. Քրիստոնեության ընդունումը Հին Ռուսիայում
գ. Իսլամի առաջացումը
դ. Վերդենի բաժանքը

1) բ,ա,գ,դ
2) գ,դ,ա,բ
3) գ,դ,բ,ա
4) գ,բ,դ,ա



75 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա. Ջեմալ փաշայի սպանությունը
բ. Թալեաթ փաշայի սպանությունը
գ. Օսմանյան նախկին վարչապետ Սամիդ Հալիմի սպանությունը
դ. Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի սպանությունը
ե. Մուստաֆա Քեմալի կողմից ժողովրդական կուսակցության հիմնումը

1) ա,գ,բ,ե,դ
2) գ,ա,բ,դ,ե
3) բ,գ,դ,ա,ե
4) բ,դ,ա,ե,գ

76 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Խորհրդա-ֆիննական պատերազմի սկիզբը
բ. Ֆիլիպինների ազատագրումն ամերիկյան զորքերի կողմից
գ. Ճապոնական զորքերի ներխուժումը Խասան լճի շրջան
դ. Իտալիայի միանալը Հակակոմինտերնական պակտին
ե. Գերմանական զորքերի ներխուժումը Ֆրանսիա
զ. Ֆրանկլին Ռուզվելտի մահը
է. Եթովպիայի գրավումը Իտալիայի կողմից
ը. Փոխադարձ օգնության պայմանագրի ստորագրումը Անգլիայի և Լեհաստանի միջև
թ. Գերմանական զորքերի մուտքն Աթենք
ժ. Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիան

1) ա,զ,բ,թ,ե,դ,ը,գ,է,ժ
2) բ,ե,ա,դ,թ,ժ,գ,ը,է,զ
3) է,ը,գ,դ,ա,ե,զ,ժ,բ,թ
4) է,դ,գ,ը,ա,ե,թ,բ,զ,ժ

77 Ու՞մ էին հասցեագրված Վ. Մոլոտովի հետևյալ խոսքերը. «Դա ի՞նչ է, պատերազմի հայտարարությու՞ն է»:

1) Հիտլերին
2) Շուլենբուրգին
3) Ռիբենտրոպին
4) Մուսսոլինիին

72 Դասակարգումները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. ազգային հարց
2. «Հայկական օջախ»
3. գաղութ
4. սուվերենություն
5. «Նանսենյան անձնագիր»

ա. պետության անկախ,ինքնուրույն լինելն արտաքին և ներքին գործերում
բ. որևէ օտար պետության գերիշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք,որը զրկված է քաղաքական ինքնուրույնությունից
գ. Լոնդոնի կոնֆերանսում առաջ քաշված հարց
դ. Ազգերի լիգայի կողմից գաղթականներին տրվող ժամանակավոր վկայագիր
ե. Լոզանի կոնֆերանսում բարձրացված հարց
զ. որևէ պետության ներսում ազգերի,ազգությունների կամ էթնիկական խմբերի փոխհարաբերությունների արդյունքում առաջացած հիմնախնդիրների ամբողջություն

1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-զ, 5-դ
2) 1-զ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-դ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-ե
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-բ

73 Նշվածներից որո՞նք են հանդիսանում Իտալիայի միավորման պատճառներ.

ա. Իտալացիներն ունեին միասնական գրական լեզու,մշակույթ,կրոն և ազգային նկարագիր:
բ. Իտալիայի անկախությանը սպառնում էր Եռյակ դաշինքը:
գ. Երկրում բռնկվել էին ժողովրդական հզոր ապստամբություններ:
դ. Երկրի տարբեր մասերը կապված էին միմյանց հետ տնտեսական շահերով:
ե. Իտալացիների մեծ մասը համոզված էր,որ հասել է ազգային երազանքի իրականացման պահը:

1) ա,բ,գ
2) ա,դ,ե
3) գ,դ,ե
4) ա,գ,ե

74 Որո՞նք են Իրանում շահական իշխանության տապալման պատճառները.

ա. սոցիալական խիստ ծանր իրավիճակի ստեղծումը
բ. ազգամիջյան հակասությունների սրացումը և առճակատումը տարբեր էթնիկական խմբերի միջև
գ. ԱՄՆ-ի ազդեցության խիստ աճը երկրի ներքին կյանքում
դ. ԽՍՀՄ-ի միջամտությունը երկրի ներքին գործերին
ե. աջակողմյան ուժերի դժգոհությունը շահական իշխանությունից

1) ա,գ,ե
2) բ,գ,ե
3) ա,գ,դ
4) ա,բ,դ



19 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Լուի 16–ի գահակալության սկիզբը
բ. Վիլհելմ Օրանացու Անգլիայի թագավոր հռչակվելը
գ. Գլխավոր շտատների հրավիրումը Լուի 16–ի կողմից
դ. Բաստիլի գրավումը

1) բ,ա,դ,գ
2) բ,ա,գ,դ
3) գ,ա,բ,դ
4) ա,գ,դ,բ

20 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը
բ. Ֆրանսիայի ազատագրումը
գ. ԽՍՀՄ-ի կողմից Ճապոնիային պատերազմ հայտարարելը
դ. Հայրենական մեծ պատերազմի ավարտը

1) ա,գ,դ,բ
2) գ,ա,բ,դ
3) դ,բ,գ,ա
4) բ,դ,գ,ա

21 Ե՞րբ է կոնսուլ ընտրվել Գայոս Մարիուսը.

1) Ք.ա. 107թ.
2) Ք.ա. 114թ.
3) Ք.ա. 110թ.
4) Ք.ա. 90թ.

22 Ե՞րբ են պորտուգալացիները շրջանցել Բոխադորի հրվանդանը.

1) 1419թ.
2) 1433թ.
3) 1434թ.
4) 1435թ.

23 Ե՞րբ է կայացել Համաձայնությունը՝ Անտանտը,Ֆրանսիայի և Անգլիայի միջև.

1) 1893թ. մայիսին
2) 1904թ. ապրիլին
3) 1882թ. մարտին
4) 1885թ. ապրիլին

24 Ե՞րբ են խորհրդային զորքերը ճեղքել Լենինգրադի շրջափակման օղակը.

1) 1943թ. հունիսին
2) 1942թ. հունվարին
3) 1943թ. հունվարին
4) 1942թ. հունիսին

**25** Ե՞րբ է Ֆրանկլին Ռուզվելտը ընտրվել նախագահ.

1) 1933թ.
2) 1932թ.
3) 1928թ.
4) 1935թ.

**26** Ո՞րտեղ էին կառուցված հռոմեական գլխավոր աստվածների տաճարները.

1) Պալատին բլրի վրա
2) Պանթեոնում
3) Վեզուվի ստորոտին
4) Կապիտոլիումի բլրի վրա

**27** Վեստգոթերի ո՞ր առաջնորդը գրավեց և թալանեց Հռոմը.

1) Ալարիքը
2) Թեոդորիքը
3) Պիպին Կարճահասակը
4) Օդոակրը

**28** Ու՞մ դեմ էր ուղղված դրևլյանների ապստամբությունը.

1) Օլեգի
2) Իգորի
3) Օլգայի
4) Յարոսլավ Իմաստունի

**29** Ո՞ր կազմակերպության անդամ է եղել Ջուզեպպե Գարիբալդին.

1) «Երիտասարդ հայրենասերներ»
2) «Երիտասարդ Իտալիա»
3) «Վատիկանի պաշտպաններ»
4) «Կարմիր հազարյակ»

**30** Ո՞ր խորհրդաժողովում է հաստատվել «հավասար հնարավորությունների» սկզբունքը.

1) Պոտսդամի
2) Թեհրանի
3) Վաշինգտոնի
4) Յալթայի

**31** Ո՞րն է Աթենքի արքոնտ Սոլոնի բարեփոխումների հիմնական հետևանքը.

1) Դեմոսի իրավունքները խիստ կրճատվեցին:
2) Աթենքը վերածվեց միջերկրածովյան ամենահզոր պետության:
3) Աթենքը դարձավ Հունաստանի ամենահզոր պոլիսը:
4) Արիստոկրատիայի իշխանությունը խիստ թուլացավ:



**69** Բերված փաստարկներից ընտրել չորսը,որոնք տեղ են գտել Ատլանտյան խարտիայում.

ա. ԱՄՆ-ը և Անգլիան տարածքային նվաճումների չեն ձգտում
բ. Երկրորդ ճակատը բացվելու էր Եվրոպայում 1942թ.
գ. Երկու պետություններն ընտրում են բոլոր ժողովուրդների իրավունքները՝ կամովին ընտրելու իրենց կառավարման ձևը
դ. ԱՄՆ-ը և Անգլիան օգնելու են բռնի կերպով ինքնուրույնությունից զրկված ժողովուրդներին՝ վերականգնելու իրենց անկախությունը
ե. Երկու պետությունների ջանքերով ստեղծվելու է Միավորված ազգերի կազմակերպություն
զ. ԱՄՆ-ը և Անգլիան հավաստում են,որ անհրաժեշտ զինամթերքով կօգնեն ԽՍՀՄ-ին

1) բ,դ,ե,զ
2) ա,գ,դ,զ
3) ա,դ,ե,զ
4) ա,բ,դ,ե

**70** Ովքե՞ր էին ժիրոնդիստները.

1) Լուի 16-ին մահապատժի ենթարկելու կողմնակիցները
2) միապետության կողմնակիցները Ֆրանսիայում
3) Կոնվենտի այն պատգամավորները,որոնք իրենց անվանումը ստացել էին այն դեպարտամենտից,որտեղից ընտրվել էին
4) Կոնվենտի յակոբինյան պատգամավորների այն հատվածը,որոնք զբաղեցնում էին ամենաբարձր տեղերը

**71** Նշվածներից ո՞րն է «միլիտարիզմ» տերմինի բացատրությունը.

1) քաղաքական հոսանք,որի ներկայացուցիչները տիրող հասարակարգի արմատական փոփոխությունների և վճռական գործողությունների կազմակերպիչներն են
2) հետադիմական գաղափարախոսություն,որն ուղղված է նոր պատերազմի նախապատրաստմանը
3) սպառազինությունների աճի և նվաճողական պատերազմի նախապատրաստմանն ուղղված քաղաքականություն
4) պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում հաղթող երկրին

**67** **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Ֆիլիպ 2-ի սպանությունից հետո նրա կողմից միավորված Մակեդոնական պետությունը քայքայվեց:
բ. Իր հսկայական պետությունն Ալեքսանդրը բաժանեց խոշոր մարզերի,որոնց կառավարիչներ նշանակեց ինչպես իր զորավարներին,այնպես էլ տեղացի կամ պարսիկ պաշտոնյաների:
գ. Պարսկաստանից հետո մակեդոնական բանակը նվաճեց Մարաստանը,Պարթևստանը և Բակտրիան:
դ. Մակեդոնացու տերության մայրաքաղաքը դարձավ Բաբելոնը:
ե. Հանդիպելով Միջին Ասիայի ժողովուրդների համառ դիմադրությանը՝ Ալեքսանդրը ստիպված եր դադարեցնել արշավանքը:
զ. Իսոսի ճակատամարտով ավարտվեց Փոքր Ասիայի նվաճումը մակեդոնական բանակի կողմից:
է. Գավգամելայի ճակատամարտին մասնակցում էին նաև Մեծ Հայքի և Ծոփքի զորքերը:

1) բ,գ,դ,զ
2) ա,գ,ե,զ
3) բ,գ,զ,է
4) ա,դ,ե,է

**68** **Նշված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Ֆրանսիայում Ազգային ժողովը բաղկացած էր Պատգամավորների պալատից և Սենատից
բ. Գերմանիայի միավորման գործում վճռական դեր խաղացին Պրուսիան և Բավարիան
գ. Ֆրանսիայի միայն աֆրիկյան գաղութների ընդհանուր տարածքը 17անգամ գերազանցում էր Ֆրանսիայի բուն տարածքը
դ. 1861թ. պառլամենտն Իտալիայի թագավոր հռչակեց Կամիլլո Կավուրին:
ե. 1875թ. Սահմանադրությամբ Ֆրանսիայում բարձրագույն գործադիր իշխանությունը տրվում էր վարչապետին,որին ընտրում էին Սենատը և Պատգամավորների պալատը:

1) ա,գ,դ
2) բ,գ,ե
3) բ,դ,ե
4) ա,դ,ե



**32** **Ո՞րն է 1380թ. սեպտեմբերին Կուլիկովոյի ճակատամարտում ռուսների տարած հաղթանակի հիմնական հետևանքը.**

1) Ամրապնդվեց Մոսկվայի՝ որպես ռուսական երկրների միավորման կենտրոնի հեղինակությունը:
2) Կործանվեց մոնղոլների Ոսկե Հորդա պետությունը:
3) Մոսկովյան իշխանությանը միացվեցին Նովգորոդի հանրապետությունն ու Տվերի իշխանությունը:
4) Ռազմա-քաղաքական դաշինք կնքվեց Մոսկվայի և Լիտվական մեծ իշխանության միջև:

**33** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Զամայի ճակատամարտը
բ. Մակեդոնիայի վերածումը հռոմեական պրովինցիայի
գ. Կաննեի ճակատամարտը
դ. Գայոս Մարիուսի կոնսուլ ընտրվելը
ե. Սենատի նիստի ժամանակ Յուլիոս Կեսարի սպանությունը

1) դ,բ,ա,ե,գ
2) ե,բ,ա,գ,դ
3) գ,ա,բ,դ,ե
4) բ,ա,ե,գ,դ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ազենկուրի ճակատամարտը
բ. Խաչակիրների ջախջախումը Տիբերիա քաղաքի մոտ Սալահ-ադ-Դինի կողմից
գ. Կոստանդնուպոլսի գրավումը թուրք-օսմանցիների կողմից
դ. Անտիոքի նվաճումը խաչակիրների կողմից
ե. Հարյուրամյա պատերազմի սկիզբը

1) բ,դ,ա,գ,ե
2) դ,բ,ե,ա,գ
3) գ,բ,ա,ե,դ
4) ա,ե,գ,դ,բ

**35** **Կարդալ մեջբերված հատվածը և լրացնել բաց թողնված բառերը. «…,քորասմները,սոգդերը և արեյները վճարում էին 300… . սա … նահանգն էր»:**

1) սակերը,մինա,տասներեքերորդ
2) պարթևները,տաղանդ,տասնվեցերորդ
3) արմենները,դահեկան,տասնհինգերորդ
4) ուտիները,դինար,տասնմեկերորդ

36 Ո՞ր պետությունում էր սահմանված հարկման հետևյալ կարգը. «Սագարտիները,սարանգները,թամանները,ուտիները,մյուկերը և Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները … միասին վճարում էին 600 տաղանդ հարկ…»:

1) Ասորեստանում
2) Հռոմեական կայսրությունում
3) Աքեմենյան Պարսկաստանում
4) Ալեքսանդր Մակեդոնացու տերությունում

37 Բնակավայրը համապատասխանեցնել երկրի հետ.

1. Էքբատան — ա. Սիցիլիա
2. Ալեքսանդրիա — բ. Պարսկաստան
3. Կուսսար — գ. Մարաստան
4. Բիբլոս — դ.Խեթական պետություն
5. Սիրակուզա — ե. Փյունիկիա
   զ. Եգիպտոս

1) 1-բ,2-զ,3-գ,4-ա,5-ե
2) 1-գ,2-զ,3-դ,4-ե,5-ա
3) 1-ա,2-ե,3-բ,4-գ,5-դ
4) 1-զ,2-դ,3-գ,4-ե,5-ա

38 Համապատասխանեցնել պատմական իրադարձությունները տարեթվերի հետ.

1. Տվերի միացումը Մոսկովյան պետությանը — ա. 1380թ.
2.Ուգրայի դիմակայությունը — բ.1478թ.
3.Կուլիկովյի ճակատամարտը — գ.1485թ.
4.Մեծ Նովգորոդի միացումը Մոսկովյան պետությանը — դ.1465թ.
ե.1480թ.

1) 1-գ,2-ե,3-ա,4-բ
2) 1-դ,2-բ,3-ե,4-գ
3) 1-ա,2-դ,3-բ,4-ե
4) 1-գ,2-ա,3-դ,4-բ

39 Ո՞վ էր գլխավորում անգլիական նավատորմը Տրաֆալգարի ճակատամարտում.

1) Թոմաս Ջեֆերսոնը
2) Նելսոնը
3) Ջեյմս Կուկը
4) Պիտ Ավագը

40 ՄԱԿ-ի ո՞ր մարմինն է համարվում միջազգային խաղաղության և անվտանգության գլխավոր պատասխանատուն.

1) Միջազգային դատարանը
2) Քարտուղարությունը
3) Անվտանգության խորհուրդը
4) Գլխավոր ասամբլեան



65 Կատարել համապատասխանեցում.

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տիրանիայի հաստատումը | 1. | Ք.ա.550թ. | 1. | Սպարտակ | 1. | Կորնթոս |
| 2. | Հունական պոլիսների համաժողովը | 2. | Ք.ա. 560թ. | 2. | Պիսիստրատ | 2. | Իտալիա |
| 3. | Էքբատանի նվաճումը | 3. | Ք.ա.337թ. | 3. | Ֆիլիպ 2 | 3. | Աթենք |
| 4. | Ստրուկների ապստամբությունը | 4. | Ք.ա.74թ. | 4. | Կյուրոս Մեծ | 4. | Մարաստան |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 2 | 3 |
| 2 | 4 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 | 2 |
| 4 | 2 | 1 | 4 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 2 | 3 |
| 2 | 4 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 | 4 |
| 4 | 2 | 1 | 2 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 2 | 3 |
| 2 | 3 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 | 4 |
| 4 | 4 | 1 | 2 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 3 |
| 2 | 1 | 3 | 4 |
| 3 | 2 | 4 | 1 |
| 4 | 3 | 1 | 2 |

66 Կատարել համապատասխանեցում.

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հիջրայի սկիզբը | 1. | 1190թ. | 1. | Ահմադ խան | 1. | Լեռնային Կիլիկիա |
| 2. | Անգլիացիների պարտությունը | 2. | 1480թ. | 2. | Ֆրիդրիխ 1-ին Բարբարոսա | 2. | Ուգրա |
| 3. | Գերմանական խաչակիրների վերադարձը 3-րդ արշավանքից | 3. | 622թ. | 3. | Ժաննա դ'Արկ | 3. | Օռլեան |
| 4. | Ոսկե Հորդայի լծի վերջնական տապալումը | 4. | 1428թ. | 4. | Մուհամեդ | 4. | Յաթրիբ |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 1 | 2 |
| 2 | 3 | 2 | 4 |
| 3 | 4 | 4 | 1 |
| 4 | 1 | 3 | 3 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 4 |
| 2 | 4 | 3 | 2 |
| 3 | 2 | 2 | 1 |
| 4 | 1 | 1 | 3 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 3 |
| 2 | 4 | 1 | 2 |
| 3 | 1 | 2 | 1 |
| 4 | 2 | 3 | 4 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 4 |
| 2 | 4 | 3 | 3 |
| 3 | 1 | 2 | 1 |
| 4 | 2 | 1 | 2 |

62 **Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության.**

ա. Միխայիլ Կուտուզով
բ. Վիլհելմ 1
գ. Ֆրանց Ֆերդինանդ
դ. Ջոն Բրաուն
ե. Պավել 1
զ. Ժան Պոլ Մարատ
է. Իվան Մազեպա
ը. Ալեքսեյ Միխայլովիչ
թ. Թոմաս Ջեֆերսոն
ժ. Վիլհելմ Օրանացի

1) ժ,է,ը,թ,զ,ե,դ,ա,գ,բ
2) ը,ժ,է,թ,զ,ե,ա,դ,բ,գ
3) ա,ե,ժ,ը,է,գ,բ,դ,թ,զ
4) գ,ա,ժ,բ,ե,դ,զ,թ,ը,է

63 **Ո՞ր գրքից է մեջբերված հետևյալ հատվածը. «Առանձին իշխանատոհմեր,չբացառելով Պրուսիան,ինքնին գերմանական ժողովրդի նկատմամբ երբեք չեն ունեցել պատմական իրավունք,սեփական շահերի համար այն բաժանել են մասնավոր տիրույթների,տիրել ազգային մարմնի առանձին մասերի վրա»:**

1) Էմանուել Կանտի«Զուտ բանականության քննադատություն»-ից
2) Օտտո Բիսմարկի «Մտքեր և հուշեր»-ից
3) Ժան-Ժակ Ռուսոյի «Հասարակական դաշինք»-ից
4) Շառլ Մոնտեսքյոյի «Օրենքների ոգին» գրքից

64 **Ո՞ր փաստաթղթից են մեջբերված հետևյալ խոսքերը. «Մարդիկ ի ծնե իրենց իրավունքների մեջ ազատ են ու իրավահավասար»:**

1) «Մեծ բողոք»-ից
2) «Անկախության հռչակագրից»
3) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրից»
4) «Իրավունքների մասին բիլլ»-ից



41 **Ի՞նչ հետևանք ունեցավ 1905-1911թթ. «Մարոկկոյի ճգնաժամը».**

1) Մարոկկոն լիակատար անկախություն ձեռք բերեց:
2) Մարոկկոյում հաստատվեց Ֆրանսիայի և Իսպանիայի հովանավորությունը:
3) Սկսվեց համաեվրոպական մեծ պատերազմ:
4) Մարոկկոյում հաստատվեց Գերմանիայի գերիշխանությունը:

42 **Ի՞նչ նշանակություն ունեցավ Կուրսկի ճակատամարտը երկրորդ համաշխարհային պատերազմի հետագա ընթացքի վրա.**

1) Ազատագրվեցին Ուկրաինան և Բելառուսիան:
2) Երկրորդ համաշխարհային պատերազմում ավարտվեց արմատական բեկումը:
3) Դրվեց երկրորդ համաշխարհային պատերազմում արմատական բեկման սկիզբը:
4) Ձախողվեց ֆաշիստական ղեկավարության «Կայծակնային պատերազմի» պլանը:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ռուս-ճապոնական պատերազմի սկիզբը
բ. Աբրահամ Լինկոլնի ընտրվելը ԱՄՆ-ի նախագահ
գ. «Մարոկկոյի ճգնաժամը»
դ. Ղրիմի խանության միացումը Ռուսաստանին

1) ա,դ,բ,գ
2) ա,գ,բ,դ
3) բ,ա,գ,դ
4) դ,բ,ա,գ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նիշտատդի հաշտության պայմանագիրը
բ. քաղաքացիական կռիվներն Անգլիայում
գ. Երրորդ հանրապետության ստեղծումը Ֆրանսիայում
դ. Սուվորովի ալպյան արշավանքը
ե. Պավել 1-ի սպանությունը
զ. քաղաքացիական պատերազմի առաջին փուլը ԱՄՆ-ում

1) ա,դ,ե,բ,գ,զ
2) բ,ա,դ,ե,զ,գ
3) բ,ե,դ,զ,ա,գ
4) ա,բ,ե,գ,զ,դ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դանիայի և Նորվեգիայի գրավումը Գերմանիայի կողմից
բ. Անգլիայի ռմբակոծման սկիզբը գերմանացիների կողմից
գ. Գերմանական զորքերի ներխուժումը Ռումինիա
դ. Փարիզի անձնատուր լինելը
ե. Անգլիայի վարչապետ Ն. Չեմբեռլենի հրաժարականը

1) ա,դ,ե,բ,գ
2) դ,ա,բ,ե,գ
3) ա,ե,դ,բ,գ
4) գ,ա,դ,ե,բ

46 **Ո՞ր գրքում է Մարտին Վալդզեմյուլլերը հետևյալ առաջարկությունն արել. «Քանի որ աշխարհի քառորդ մասը հայտնագործել է Ամերիկուսը,ուստի այն հարկ է անվանել Ամերիկա»:**

1) «Տիեզերագիտության ներածություն»
2) «Աշխարհագրության հիմունքներ»
3) «Նոր աշխարհի հայտնագործումը»
4) «Տիեզերագիտության հիմունքներ»

47 **Ո՞ր տաճարի բացման արարողության ժամանակ է արվել հետևյալ արտահայտությունը. «Սողոմոն ես հաղթեցի քեզ».**

1) Սուրբ Աստվածածնի
2) Սուրբ Պետրոսի
3) Սուրբ Սոֆիայի
4) Սուրբ Խաչի

48 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. եգիպտական զորքերի ներխուժումը Հունաստան
2. Ազգային ժողովի կողմից Հունաստանի անկախության հռչակումը
3. «Բարեկամների ընկերություն» գաղտնի կազմակերպության ստեղծումը
4. ապստամբության սկիզբը Մորեայում

ա. 1821թ.
բ. 1829թ.
գ. 1825թ.
դ. 1822թ.
ե. 1814թ.

1) 1-ա,2-գ,3-ե,4-բ
2) 1-բ,2-դ,3-ա,4-ե
3) 1-գ,2-դ,3-ե,4-ա
4) 1-դ,2-ա,3-գ,4-ե



60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մարաստանի մայրաքաղաք Էքբատանի գրավումը Կյուրոս Մեծի կողմից
բ. Եգիպտոսի նվաճումը հիքսոսների կողմից
գ. Միջին Ասիայի գրավումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
դ. Բաբելոնի գրավումը և ավերումը Սինաքերիբի կողմից
ե. Զամայի ճակատամարտը
զ. կասսիտական վերջին արքայի գերվելը ասորեստանցիների կողմից
է. Սենատի կողմից Հուլիոս Կեսարին ցմահ դիկտատոր հռչակելը
ը. Պաղեստինի և Սիրիայի նվաճումը Թութմոս 3-ի կողմից
թ. Անտիոքոս 3-ի բանակի մուտքը Հունաստան
ժ. Եգիպտոսի նվաճումը Կամբյուսես արքայի կողմից

1) ա,գ,ժ,բ,թ,է,զ,ե,դ,ը
2) բ,ը,զ,ժ,ա,դ,գ,թ,է,ե
3) բ,ը,զ,դ,ա,ժ,գ,ե,թ,է
4) գ,ա,բ,ե,ժ,զ,թ,ը,է,դ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Վերդենի բաժանումը
բ. Գյուղացիական պատերազմի սկիզբը Վերին Հռենոսի շրջանում
գ. Ոսկե Հորդայի վերացումը
դ. Կառլոս Մեծի արշավանքը Իսպանիա
ե. Բուլղարիայի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից
զ. Կիևի գրավումը իշխան Օլեգի կողմից
է. Երուսաղեմի գրավումը Սալահ-ադ-Դինի կողմից
ը. Մանազկերտի ճակատամարտը
թ. Խալիֆ Ալ Մանսուրի կառավարման սկիզբը
ժ. Տվերի միացումը Մոսկվայի իշխանությանը

1) թ,դ,ա,զ,ե,ը,է,ժ,գ,բ
2) դ,ա,թ,բ,զ,է,ժ,գ,ը,ե
3) թ,ա,դ,զ,ե,է,ը,ժ,բ,գ
4) ա,թ,բ,դ,ե,զ,ժ,գ,ը,է

**57** **Նշվածներից որո՞նք են Սելևկյան Անտիոքոս 3-ի պարտության հետևանքները.**

ա. Հռոմեական պրովինցիաների վերածվեցին Հռոդոսը,Պերգամոնը և Կապադովկիան:
բ. Սկսվեց Սելևկյան տերության քայքայումը:
գ. Սելևկյան տերությունը կործանվեց և հեռացավ պատմական ասպարեզից:
դ. Հռոմը նվաճեց Ասորիքը՝ այն վերածելով պրովինցիայի:
ե. Փոքր Ասիայի հելլենիստական պետություններն անկախ հայտարարվեցին:
զ. Անկախությունը վերականգնեցին Մեծ Հայքն ու Ծոփքը:

1) ա,դ,զ
2) ա,գ,ե
3) բ,ե,զ
4) ա,գ,զ

**58** **Նշվածներից որո՞նք են 14-15դդ. թուրքական նվաճումների գլխավոր հետևանքները.**

ա. Ստեղծվեց հզոր Օսմանյան կայսրությունը:
բ. Փոքր Ասիայի մեծագույն մասը մտավ նորաստեղծ Իկոնիայի սուլթանության մեջ:
գ. Նվաճվեց Կոստանդնուպոլիսը,որով փակվեց Բյուզանդական կայսրության վերջին էջը:
դ. Թուրքերը տիրացան Ապենինյան թերակղզուն:
ե. Հարավարևելյան Եվրոպան մտավ Օսմանյան կայսրության մեջ:
զ. Խթանվեց տնտեսության և մշակույթի աննախադեպ վերելքը Հարավարևելյան Եվրոպայի երկրներում:
է. Իսլամը դարձավ Եվրոպայի քաղաքական կյանքի կարևորագույն գործոններից մեկը:

1) ա,գ,ե,է
2) ա,բ,ե,է
3) բ,դ,ե,զ
4) ա,գ,զ,է

**59** **Բերված փաստարկներից ընտրել երեքը,որոնց պատճառով բռնկվեց 1870-1871թթ. ֆրանս-պրուսական պատերազմը.**

ա. Նապոլեոն 3-ի ցանկությունը Ֆրանսիային վերադարձնելու Էլզասը և Լոթարինգիան
բ. խոչընդոտելու Գերմանիայի միավորմանը
գ. կասեցնելու ավստրո-պրուսական մերձեցումը
դ. Ֆրանսիայում ժողովրդական հուզումների կանխարգելումը
ե. Նապոլեոն 3-ի նպատակը՝ ջախջախելու Պրուսիան
զ. Ֆրանսիայի կայսրի ձգտումը՝ վերականգնելու իր սասանված հեղինակությունը

1) ա,բ,զ
2) գ,դ,ե
3) ա,դ,ե
4) բ,ե,զ



**49** **Կատարել համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1. Ֆիլիպ 2-րդ Օգոստոս | ա. Երուսաղեմի թագավոր |
| 2. Ռիչարդ 1–ին Առյուծասիրտ | բ. Ֆրանսիայի թագավոր |
| 3. Ֆրիդրիխ 1–ին Բարբարոսա | գ. Անգլիայի դուքս |
| 4. Կառլոս Խիզախ | դ. Անգլիայի թագավոր |
| 5. Գոտֆրիդ Բուլյոնացի | ե. Գերմանիայի կայսր |
| | զ. Բուրգունդիայի դուքս |

1) 1-գ,2-ա,3-ե,4-դ,5-զ
2) 1-ա,2-զ,3-բ,4-գ,5-ե
3) 1-դ,2-գ,3-ա,4-բ,5-զ
4) 1-բ,2-դ,3-ե,4-զ,5-ա

**50** **Պաշտոնները համապատասխանեցնել պետական գործիչների անունների հետ.**

| | |
|---|---|
| 1. Ֆրանսիայի նախագահ | ա. Նևիլ Չեմբեռլեն |
| 2. ԳՖՀ-ի կանցլեր | բ. Դուայթ Էյզենհաուեր |
| 3. Մեծ Բրիտանիայի վարչապետ | գ. Վիլհելմ Պիկ |
| 4. ԱՄՆ-ի Նախագահ | դ. Ժորժ Պոմպիդու |
| | ե. Հելմուտ Կոլ |

1) 1-դ,2-ե,3-ա,4-բ
2) 1-դ,2-գ,3-բ,4-ա
3) 1-դ,2-ե,3-գ,4-ա
4) 1-գ,2-ա,3-դ,4-ե

## Բ Մակարդակ

**51** **Բերված փաստարկներից ո՞րն է սխալ.**

1) Հունական այբուբենը կազմված էր 22 տառից:
2) Դասական ժամանակաշրջանի Հունաստանում բարձր զարգացման էր հասել նկարչությունը:
3) Ֆիդիասը հելլենիզմի դարաշրջանի ամենահայտնի քանդակագործ-ճարտարապետն էր:
4) Նշանավոր փիլիսոփա Սոկրատեսի աշակերտներից էր Պլատոնը:

**52** **Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

ա. Գոթերի Արևմտյան միությունը զբաղեցնում էր Դնեպրից մինչև Դնեստր,իսկ Արևելյանը՝ Դանուբից մինչև Դնեստր ընկած տարածքները:
բ. Օստգոթական թագավորության հիմնադիրը էր Թեոդորիքը:
գ. Ժողովուրդների մեծ գաղթի սկիզբը կապված է քոչվոր հոների տեղաշարժերի հետ:
դ. Վանդալները և ալլանները 80 հազարանոց բանակով անցան Ջիբրալթարը՝ հաստատվելով Պիրենեյան թերակղզում:
ե. Հռոմի գրավումից հետո վեստգոթերը բնակություն հաստատեցին հարավային և հարավ-արևմտյան Գալլիայում:
զ. Բուրգունդները նվաճեցին Փարիզի շրջանը,որը հետագայում կոչվեց Բուրգունդիա:
է. Արևմտյան Հռոմեական կայսրության արքունիքը նրա անկման շրջանում տեղափոխվել էր Հռավեննա:
ը. Գահընկեց անելով Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին կայսրին՝ Օդոակրը կայսերական խորհրդանշաններն ուղղարկեց Կոստանդնուպոլիս՝ կայսր Թեոդոսիոսին:

1) ա,դ,ե,ը
2) ա,դ,զ,ը
3) բ,դ,զ,ը
4) ա,գ,զ,է

**53** **Բերված փաստարկներից ընտրել երեքը,որոնք տեղ են գտել Ազգերի լիգայի կանոնադրության մեջ.**

ա. Երաշխավորվում էր Ազգերի լիգայի անդամ պետությունների տարածքային ամբողջականությունը:
բ. Երաշխավորվում էր մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը բոլորի համար:
գ. Անդամ պետությունները պարտավորվում էին ձեռնպահ մնալ միջազգային հարաբերություններում ուժի կիրառման կամ ուժի սպառնալիքի գործադրումից:
դ. Անդամ պետությունները պարտավոր էին իրենց ջանքերը միավորել ընդդեմ ագրեսիայի:
ե. Ազգերի լիգան իրավունք ուներ միջամտելու նաև ոչ անդամ պետությունների միջև ծագած վեճերին:

1) բ,գ,դ
2) ա,գ,դ
3) ա,դ,ե
4) բ,գ,ե



**54** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. տիրան
2. դահեկան
3. հռետոր
4. սատրապություն

ա. ճարտարախոս
բ. Աթենական պետությունը կառավարող միանձնյա իշխանավոր
գ. հռոմեական պրովինցիա
դ. փոխարքայություն Աքեմենյան Պարսկաստանում
ե. Դարեհ 1-ի կողմից մտցված միասնական դրամ

1) 1-բ,2-ե,3-ա,4-դ
2) 1-ա,2-բ,3-ա,4-գ
3) 1-բ,2-ա,3-գ,4-դ
4) 1-ե,2-դ,3-ա,4-բ

**55** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. դոժ
2. զեմշչինա
3. նվիրապետություն
4. Ընտրյալ ռադա

ա. ավատատիրական դասի ներսում մարդկանց հարաբերությունների կառուցման սկզբունք
բ. ցարի շուրջը մերձավոր անձանցից կազմված խումբ,որը կառավարում էր Ռուսական պետությունը
գ. ցարի համար առանձնացված հատուկ վիճակ Ռուսական պետությունում
դ. Վենետիկի և Ջենովայի հանրապետություններում ցմահ ընտրվող կառավարիչ
ե. ցարի համար առանձնացված հատուկ վիճակից դուրս գտնվող հողերի հավաքական անվանումը Ռուսական պետությունում

1) 1-ա,2-ե,3-բ,4-դ
2) 1-դ,2-ե,3-ա,4-բ
3) 1-ա,2-գ,3-դ,4-ե
4) 1-դ,2-ե,3-բ,4-գ

**56** **Նշվածներից ո՞րն է «լեգիտիմ» բառի հայերեն համարժեքը.**

1) «արդարացի»
2) «սոցիալական»
3) «օրինական»
4) «իրավական»